



ՄՈՒՐԻ ՅԱԿՈՐ

ՄԱՍՏՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

ՎԵՃԵՐՈՐԴ ՕՐ ԾԱՆՈՒԵԱՆ

11 ՅՈՒՆԻՈՒՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1
«Շնորհարար Նոր Տարի»	էջ 2
Մկրտությունը	էջ 4
Ուսուցում ողորմութեան մասին	էջ 6
Ծանուցում	էջ 8

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ
Ա. ՆԱՄԱԿԷՆ
(4.13-18)**

Եղբայրներ, կ'ուզենք որ մեռածներուն մասին ճշմարտութիւնը գիտնաք, որպէսզի չտրտմիք ուրիշներուն պէս որոնք ոեւէ յոյս չունին: Որովհետեւ, եթէ

կը հաւատանք թէ Աստուծ Յիսուսի ձեռքով եւ անոր հետ ետ կեանքի պիտի բերէ անոնք որ անոր հաւատացին եւ մեռան:

կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ եւ յարութիւն առաւ, նոյնպէս ալ կը հաւատանք թէ Աստուծ Յիսուսի ձեռքով եւ անոր հետ ետ կեանքի պիտի բերէ անոնք որ անոր հաւատացին եւ մեռան:

Գիտցէք նաեւ, ինչպէս որ Տէրը ինք սորվեցուց, թէ մեզմէ անոնք որ ողջ մնացած կ'ըլլան Տիրոջ գալուստին ատեն, մեռածներէն առաջ պիտի չանցնին: Որովհետեւ երբ հրամանը լսուի, հրեշտակապետը ազդարարէ եւ Աստուծոյ փողը հնչէ, Տէրը ինք երկինքէն պիտի իջնէ եւ նախ յարութիւն պիտի առնեն անոնք՝ որ Քրիստոսի հաւատացին եւ մեռան: Եւ ապա, մեզմէ անոնք որ այն ատեն դեռ կենդանի պիտի ըլլան՝ անոնց հետ միասին ամպերու վրայ երկինք պիտի յափշտակուին Տէրը դիմաւորելու համար. եւ այնուհետեւ Տիրոջ հետ միասին պիտի ըլլանք յաւիտեան:

Ուստի այս մտածումներով քաջալերեցէք զիրար:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(11.1-46)**

Հիւանդ մէկը կար, Ղազարոս անունով, որ Բեթանիայէն էր. այն գիւղէն, ուրկէ էին Մարիամ եւ իր քոյրը՝ Մարթա: Ասիկա այն Մարիամն էր որ իւղով օծեց Տիրոջ ոտքերը եւ իր մազերով սրբեց, եւ որուն եղբայրն էր Ղազարոս, որ հիւանդ էր: Ղազարոսի քոյրերը մարդ զրկեցին Յիսուսի մօտ, որպէսզի անոր ըսեն. «Տէ՛ր, քու սիրելի բարեկամդ հիւանդ է»: Յիսուս երբ լսեց, ըսաւ. «Այս հիւանդութիւնը ո՛չ թէ մահուան, այլ Աստուծոյ փառքին պիտի ծառայէ եւ պատճառ պիտի ըլլայ որ Աստուծոյ Որդին փառաւորուի»:

«Այս հիւանդութիւնը ո՛չ թէ մահուան, այլ Աստուծոյ փառքին պիտի ծառայէ եւ պատճառ պիտի ըլլայ որ Աստուծոյ Որդին փառաւորուի»:

Յիսուս կը սիրէր զանոնք՝ Մարթան, անոր քոյրը Մարիամը եւ Ղազարոսը: Սակայն հակառակ Ղազարոսի հիւանդութեան լուրը առնելուն, երկուր օր եւս մնաց հոն ուր կը գտնուէր: Յետոյ ըսաւ իր աշակերտներուն. «Եկէք կրկին Հրէաստան երթանք»: Աշակերտները իրեն ըսին. «Վարդապետ, հրէաստանցիները դեռ նոր կ'ուզէին քեզ քարկոծել, հիմա կրկին հո՞ն կ'երթաս»: Յիսուս անոնց պատասխանեց. «Յերեկը տասներկու ժամ չէ՞: Ան որ ցերեկ ատեն կը քալէ՝ կը սայլթաքի, որովհետեւ լոյս չունի»: Յիսուս այս խօսքերը ըսելէ ետք աւելցուց. «Մեր բարեկամը՝ Ղազարոսը քնացած է, երթամ արթնցնեմ զինք»: Աշակերտները իրեն ըսին. «Տէ՛ր, եթէ քնացած է՝ ուրեմն

կ'առողջանայ»։ Յիսուս Ղազարոսի մահուան ակնարկուածիւն կ'ընէր, մինչ աշակերտներուն այնպէս թուեցաւ թէ անոր քնանալու կ'ակնարկէ։ Այն ատեն բացայայտ կերպով ըսաւ. «Ղազարոս մեռած է. բայց ես հոն չըլլալու՝ ձեզի համար ուրախ եմ, որովհետեւ դուք ինծի պիտի հաւատաք։ Ուրեմն եկէք իր քով երթանք»։ Թովմաս, որ Երկուորեակ կը կոչուէր, ընկերներուն ըսաւ. «Օ՛ն, եկէք մենք ալ երթանք իրեն հետ մեռնելու»։

Երբ Յիսուս Բեթանիա հաւաւ, արդէն իսկ Ղազարոս չորս օրէ ի վեր թաղուած էր։ Բեթանիա Երուսաղէմի մօտիկ է, միայն երեք քիլոմետր հեռու։ Հրեաներէն շատեր հոնկէ եկած էին Մարիամի եւ Մարթայի մօտ, զանոնք մխիթարելու համար իրենց եղբոր մահուան առիթով։ Մարթա երբ լսեց թէ Յիսուս կու գայ, դիմաւորելու գնաց, մինչ

«Ե՛ս եմ յարութիւնը եւ կեանքը։ Ան որ ինծի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի»։

Մարիամ տունը մնաց։ Մարթա Յիսուսի ըսաւ. «Տէ՛ր, եթէ հոս ըլլայիր՝ եղբայրս չէր մեռնէր. բայց հիմա իսկ գիտեմ, թէ ինչ որ Աստուծմէ խնդրես՝ Աստուծո՞ք եզր պիտի տայ»։ Յիսուս անոր ըսաւ. «Եղբայրդ յարուածիւն պիտի առնէ»։

Մարթա պատասխանեց. «Գիտեմ որ յարուածիւն պիտի առնէ վերջին օրը, յարուածեան ատեն»։ Յիսուս ըսաւ. «Ե՛ս եմ յարուածիւնը եւ կեանքը։ Ան որ ինծի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի։ Իսկ ան որ ողջ է եւ ինծի կը հաւատայ՝ երբեք պիտի չմեռնի։ Կը հաւատա՞ս ըսածիս»։ «Այո՛, Տէ՛ր», պատասխանեց Մարթա, «կը հաւատամ թէ դո՛ւն ես Քրիստոսը, Աստուծոյ Որդին, որ աշխարհ պիտի գայիր»։

Մարթա այս խօսքերը ըսելէ ետք գնաց եւ իր քոյրը՝ Մարիամը կանչեց եւ փսփսալով ըսաւ. «Վարդապետը եկած է եւ քեզ կ'ողզէ»։ Մարիամ լսելուն պէս ոտքի ելաւ եւ Յիսուսի մօտ գնաց։ Յիսուս տակաւին գիւղ չէր մտած, այլ կեցած էր հոն՝ ուր Մարթա գինք դիմաւորած

էր։ Տան մէջ գտնուող հրեաները, որոնք Մարիամը կը մխիթարէին, երբ տեսան որ անմիջապէս ոտքի ելլելով գնաց, հետեւեցան անոր, որովհետեւ կարծեցին թէ գերեզման կ'երթայ՝ հոն լալու համար։ Մարիամ հասաւ այնտեղ՝ ուր Յիսուս կեցած էր։ Հազիւ զայն տեսած, անոր ոտքերուն ինկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, եթէ հոս ըլլայիր, եղբայրս չէր մեռնէր»։ Յիսուս երբ տեսաւ Մարիամը որ կու լար, ինչպէս նաեւ անոր հետ եկող Հրեաները որոնք կու լային, հոգեպէս խռովեցաւ եւ յուզուած՝ ըսաւ. «Ո՛ւր թաղեցիք գինք»։ Անոնք ըսին. «Տէ՛ր, եկո՛ւր եւ տես»։ Յիսուս լացաւ։ Հրեաները իրարու կ'ըսէին. «Տեսէք թէ ո՛րքան կը սիրէր զայն»։ Ոմանք ալ կ'ըսէին. «Այս մարդը որ կոյրին աչքը բացաւ, չէ՞ր կրնար այնպէս մը ընել՝ որ Ղազարոսը չմեռնէր»։

Յիսուս դարձեալ ներքնապէս յուզուեցաւ եւ մօտեցաւ գերեզմանին, որ քարայր մըն էր եւ որուն մուտքին քար մը դրած էին։ Յիսուս ըսաւ. «Վերցուցէ՛ք քարը»։ Մարթան, մեռնողին քոյրը, ըսաւ անոր. «Տէ՛ր, հիմա նեխած պէտք է ըլլայ, որովհետեւ չորս օրէ ի վեր թաղուած է»։ Յիսուս Մարթային ըսաւ. «Քեզի չըսի՞, որ եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքը պիտի տեսնես»։ Երբ անոնք քարը վերցուցին, Յիսուս աչքերը վեր բարձրացուց եւ ըսաւ. «Հա՛յր, շնորհակալութիւն քեզի՝ որ լսեցիր զիս։ Գիտեմ որ միշտ կը լսես զիս. բայց ինչ որ այժմ կ'ըսեմ՝ շուրջս գտնուող ժողովուրդին համար կ'ըսեմ, որպէսզի անոնք հաւատան թէ դուն զրկեցիր զիս»։ Ասիկա ըսելէ ետք՝ բարձր ձայնով կանչեց. «Ղազարո՛ս, դո՛ւրս եկուր»։ Ու Ղազարոս դուրս ելաւ՝ ոտքերը եւ ձեռքերը պատանքով փաթթուած եւ երեսը վարչամակով ծածկուած։ Յիսուս ըսաւ անոնց. «Քակեցէ՛ք պատանքը եւ ձգեցէք որ երթայ»։

Հրեաներէն շատեր, որոնք Մարիամենց տունը եկած էին, երբ Յիսուսի կատարած այս հրաշքը տեսան, հաւատացին անոր։ Սակայն ուրիշներ գացին Փարիսեցիներուն մօտ եւ պատմեցին ինչ որ Յիսուս կատարեց։

Չ. ՕՐ ԾՆՆԴԵԱՆ
(ԾԻԱԿԱԿԱ ԵՒ ԿՐՈՒԱԿԱԿԱ
ԲՆՃԱՏՐՈՒԹԻՒՆԱՆԵՐ - ԹԻՒ 36)

ԼԶ

«ՇՆՈՐՀԱՆՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ»

Ամէն տարուայ սեմին զիրար կը շնորհաւորենք, ըսելով. «Շնորհաւոր Նոր Տարի»: Այսինքն՝ իր պարզագոյն բացատրութեան մէջ ըսել կ'ուզենք՝ թէ յառաջիկայ տարին շնորհքով կամ շնորհքներով լեցուն ըլլայ:

Հարուստ մաղթանք մըն է ասիկա:

Արդ, այս առիթով ուզեցի խօսիլ շնորհքի կամ շնորհքներու մասին, որոնք ըստ մեր քրիստոնէական հաւատքին՝ երբ ի գործ դրուին՝ նոր կ'ընեն: Արդէն «շնորհք» ըստածն ալ եթէ ի գործ չգրուի՝ իր լիութեան չի հասնիր կամ չիրականանար եւ միայն ի կարողութեան «շնորհք» կը մնայ: Եւ ամէն ինչ որ ի կարողութեան կը մնայ եւ իր գործնական արտայայտութիւնը չի գտներ՝ կը կորսուի...

Ի՞նչ կը նշանակէ շնորհք:

Հին Կտակարանին մէջ անիկա նշանակած է համակրանք (օրինակ՝ «Յովսէփ շնորհք գտաւ անոր առջեւ ու կը ծառայէր անոր» ԾՆ 39.4: Նախ ըսեմ, որ «անոր»ը ակնարկութիւն է եգիպտացի դահճապետին: Ասիկա կը նշանակէ, թէ Յովսէփ անոր համակրանքին արժանացաւ): Հաճութիւն (օրինակ՝ «Նոյ Տիրոջ առջեւ շնորհք գտաւ», ԾՆ 6.8. ասիկա կը նշանակէ, թէ Նոյ Աստուծոյ հաճութեան արժանացաւ): Ողորմութիւն (օրինակ՝ «Արդ, գիտցի՛ր, որ քու Տէր Աստուածդ ի՛նքն է Աստուած, հաւատարիմ Աստուածը, որ զինք սիրողներուն ու իր պատուիրանները պահողներուն մինչեւ հազար ազգը ուխտ ու ողորմութիւն կը պահէ», Բ. Օր 7.9): Եւ այլն:

Ամէն պարագայի, Հին Կտակարանին մէջ չենք հանդիպիր շնորհքի որեւէ վարդապետութեան: Նոր Կտակարանն է եւ յատկապէս Պօղոս առաքեալի նամականին է շնորհքի վարդապետութեան աղբիւրը:

Պօղոս առաքեալ Հին Ուխտի շրջանը ներկայացուցած է իբր Օրէնքին ենթակայութիւն: «Օրէնքը մարդուն կը տիրէ՝ որքան ատեն որ մարդը կ'ապրի», ըսած է ան (Հռ 7.1): Այս խօսքով կարելի է հասկնալ, թէ Օրէնքին ենթակայութիւնը ժամանակի մը մէջ սահմանափակուած չէ: Այսինքն՝ այսօր ալ մարդիկ Օրէնքին տակ կրնան ըլլալ կամ ապրիլ ըստ Օրէնքին:

Օրէնքին ենթակայութիւնը, ըստ իրեն, դատապարտութիւն կը բերէ (հմտտ Բ. Կր 3.9): Ի՞նչ ըսել է ասիկա: Առաքեալը ինք այսպէս բացատրած է, թէ Օրէնքը «տրուեցաւ՝ որպէսզի մարդիկ իրենց յանցանքները ճանչնան» (Գղ

3.19): Կամ՝ «Որքան ատեն որ հաւատքի ժամանակը եկած չէր՝ Օրէնքը մեզ բանտարկեալներու պէս իր հսկողութեան տակ կը պահէր, սպասելով դալիք հաւատքին՝ Քրիստոսի, որ պիտի յայտնուէր: Ուրեմն, Օրէնքը մեր խնամակալ դատարար կը եղաւ, մեզ Քրիստոսի առաջնորդելով, որպէսզի հաւատքով արդարանանք» (Գղ 13.23-24):

Առաքեալը Քրիստոսով սկսած «ժամանակ»ը ներկայացուցած է իբր Շնորհքի ազատութեան շրջան: Շնորհքի շրջանը լեցուն է բազում եւ բազմատեսակ շնորհքներով: Շնորհքներուն շնորհքը Քրիստոսի խաչելութիւնն է եւ անոր առ Հայր երթալը: Անիկա է շնորհքներու խոստումին իրականացման մեկնակէտը:

Իսկ որո՞նք են շնորհքները.

ա.- Կարողութիւն իմաստութեամբ յորդորելու.

բ.- Կարողութիւն հոգեւոր գիտութեան հասնելու եւ ուսուցանելու.

գ.- Կարողութիւն բժշկելու.

դ.- Կարողութիւն հրաշագործութեան.

ե.- Կարողութիւն մարգարէական պատգամախօսութեան.

զ.- Կարողութիւն Ս. Հոգիէն տրուած պարգեւները ճանչնալու.

է.- Կարողութիւն յափշտակութեան մէջ լեզուներ խօսելու.

ը.- Կարողութիւն յափշտակութեան մէջ լեզուներով խօսուածը մեկնաբանելու.

ժ.- Կարողութիւն օգնելու կարօտեալներուն.

ժա.- Կարողութիւն անհաւատ կենցաղէ եւ աշխարհիկ ցանկութիւններէ հեռանալու եւ զգաստութեամբ, արդարութեամբ ու բարեպաշտութեամբ ապրելու.

ժբ.- Կարողութիւն մնայուն մխիթարութեան մէջ մնալու.

ժգ.- Կարողութիւն Երկնաւոր Հօրմէ սորվելու.

ժդ.- Կարողութիւն ներքնապէս ամրապընդրելու.

Եւ այլն եւ այլն: Բոլոր այն կարողութիւնները որոնք Երկինքի արքայութեան հաստատումին կը ծառայեն՝ շնորհքներ են:

Այս շնորհքներէն վեր կան այլ երեք շնորհքներ: Այդ երեքն են՝ հաւատքը, յոյսը եւ սէրը. «Իսկ այս երեքէն մեծագոյնը՝ սէրն է», կ'ըսէ առաքեալը (Ա. Կր 13.13):

Եկեղեցին այս բոլոր շնորհքներով կ'ապրի եւ կ'ըլլայ: Իւրաքանչիւր անդամը եկեղեցւոյ շնորհք մը կամ շնորհքներ ունի: Բայց իբր մէկ անդամը եկեղեցի-հաւաքականութեան՝ կը վայելէ միւս անդամներուն ունեցած շնորհքներուն բարիքները:

Ինչպէս առանց ձիւքի մարդ չկայ, առանց շնորհքի ալ քրիստոնեայ չկայ: Բազմաթիւ եւ բազմատեսակ են ձիւքերը: Բազմաթիւ եւ բազմատեսակ են շնորհքները: Ձիւքին եւ շնորհքին տարբերութիւնը անոր մէջ է, որ առաջինը գուտ

մարդկային սահմանին կը վերաբերի, իսկ երկրորդը մարդկային սահմանը բաց ունի աստուածայինին հետ հաղորդութեան, եւ ի մարդիկ կամ յերկրի երկինքի արքայութեան հաստատումին համար կ'աշխատի:

Շնորհք մը տարբեր քրիստոնեաներու մօտ նոյն գորութեամբ չկայ: Իւրաքանչիւր քրիստոնեայ իր չափով շնորհք ունի: Բայց Աստուծոյ աչքին բոլորն ալ հաւասար են եւ զիրար կ'ամբողջացնեն: Աստուծոյ աչքին՝ կարեւոր այն չէ, թէ ինչ չափի շնորհք ունիս, այլ թէ քեզի տրուած շնորհքը «կը շահարկե՞ս»: Կարգալ Յիսուսի մնասներու առակին Մատթէոսեան տարբերակը (25.14-30): Եթէ շահարկես՝ շնորհքիդ մէջ կը հարստանաս, իսկ եթէ չես շահարկեր՝ ունեցածդ ալ քեզմէ կ'առնուի եւ դուն «դուրսը՝ մութիւն» կը հանուիս...

«Շնորհաւոր Նոր Տարի»:

Տարին «նոր» կ'ըլլայ, երբ երկնատուր շնորհքները այս կեանքին մէջ «կը շահարկուին», այսինքն՝ ի գործ կը դրուին: Անոնց շահարկումը Աստուծոյ ներգործութեամբ կ'ըլլայ, կ'ըսէ Պօղոս առաքեալ, որպէսզի իր կամքը կատարուի (հմմտ Փլ 2.13):

Հոսի՝ ԳԶ

ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Հեղինակ՝
ՎԵՐՊ. ՄԱՆՈՒԷԼ ՃԻՆՊԱՇԵԱՆ

Մկրտութիւնը այն արարողութիւնն է, ուր ջուրը խորհրդանշական կերպով կը գործածուի, եւ կը նշանակէ թէ Քրիստոսի հաւատացած անհատ մը եկեղեցւոյ անդամ կը դառնայ:

Հին Ուխտի շրջանին լուացումի կամ ծիսական մաքրութեան ականդուութիւնը կար: Օրինակ Ահարոն եւ իր որդիները «Վկայութեան խորան»ի դրան առջեւ լուացուեցան. կամ Մովսէս, Ահարոն եւ Ահարոնի որդիները իրենց ձեռքերն ու ոտքերը կը լուային (Ելք 29.4, 40.31-32): Օրէնք էր, որ երբ քահանան քաւութիւն կ'ընէր, թէ՛ արարողութենէն առաջ եւ թէ՛ վերջ՝ անհրաժեշտ էր, որ լուացուէր (ՂԼ 16.4, 24): Յովհաննէսի աւետարանին մէջ, Կանայի հարսանիքին առիթով հրէական ծիսական մաքրութեան մասին ակնարկ կայ. 2.6-ին մէջ կը կարդանք. «Հրեաներու ծիսական մաքրութեան սովորութեան համաձայն, հոն քարէ վեց կարասներ

կային, որոնցմէ իւրաքանչիւրը ութսունէն հարիւր լիթր կ'առնէր»:

Քուճրան ապրող Եսենական հրեաները ծիսական լուացումներուն մեծ կարեւորութիւն կու տային:

Սակայն նախաքրիստոնէական բոլոր լուացումներն ալ պէտք չէ շփոթել քրիստոնէական մկրտութեան հետ:

Արդար է նշել, որ քրիստոնէական մկրտութենէն առաջ, երկու այլ մկրտութիւններ ալ եղած են:

Անոնցմէ մէկն էր՝ նորադարձ հրեաներու մկրտութիւնը: Հրեաներ ջուրով կը մկրտէին բոլոր այն հեթանոսները, որոնք Օրէնքը կ'ընդունէին: Այդ մկրտութեամբ մարդիկ հրէութեան կը միանային եւ կ'ըլլային անդամ հրեայ ժողովուրդին ու մասնակից՝ անոր հաւատքին:

Երկրորդը՝ Յովհաննէս Մկրտիչի կատարած մկրտութիւնն էր:

Ոմանք կը խորհին, թէ Յովհաննէսի մկրտութիւնը շարունակութիւնն էր հեթանոսութենէ հրէութեան մէջ ընդգրկուողներու համար գործադրուող մկրտութեան: Ատիկա ճիշդ չէ. անձնապէս այդ տեսակէտին համաձայն չեմ:

Որո՞նք են Յովհաննէսի Մկրտութեան յԱՏԿԱՆԵԱՆԵՐՈՒ

1.- Յովհաննէս կը մկրտէր մեղքերու թողութեան համար: Կը կարդանք. «Այդ օրերուն Աստուած անապատին մէջ խօսեցաւ Զաքարիայի որդիին՝ Յովհաննէսի: Յովհաննէս Յորդանան գետին եզերքը գտնուող բոլոր շրջանները երթալով՝ կը քարոզէր ապաշխարել եւ մկրտուիլ, որպէսզի Աստուած մեղքերու թողութիւն տայ» (ՂԿ 3.1-3):

2.- Յովհաննէս ոչ միայն հեթանոսութենէ դարձած նորահաւատներ կը մկրտէր, այլ նաեւ հրեաներ. կը կարդանք. «Իրեն կ'երթային ամբողջ Հրէաստանի եւ Երուսաղէմի բնակիչներէն շատեր եւ իրենց մեղքերը խոստովանելով՝ կը մկրտուէին անկէ Յորդանան գետին մէջ» (Մր 1.5): Հրեայ ղեկավարութեան համար այս բանը ընդունելի չէր: Միայն հեթանոսներ պէտք էր մկրտել, եւ ոչ թէ հրեաներ: Հրեաները Մովսէսն ու մարգարէները

ունէին, մանաւանդ Աբրահամի որդիներն էին, ուրեմն պէտք չունէին մկրտուելու: Այսպէս կը խորհէին անոնք:

3.- Անհրաժեշտ է ընդգծել, որ Յովհաննէս մկրտութեան բարոյական իմաստն ու արժէքը կը շեշտէ: Երբ սաղուկեցիներ եւ փարիսեցիներ մկրտուելու եկան, Յովհաննէս մէկ պատգամ ունէր. «Ասկէ ետք՝ գործով

ցոյց տուէք, թէ ապաշխարած էք: Դուք ձեզի մի՛ խորհիք, թէ կրնաք պատիժէն ազատիլ, ըսելով.- Մենք Աբրահամի որդիներն ենք» (Մտ 3.8-9):

4.- Յովհաննէսի մկրտութիւնը վախճանաբանական էր: Ան մկրտութիւնը կը կապէր Աստուծոյ թագաւորութեան գալուն հետ: Կ'ըսէր. «Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ երկինքի արքայութիւնը մօտեցած է» (Մտ 3.2):

5.- Յովհաննէս իր մկրտութիւնը կը բաղդատէ ապագային գալիք մկրտութեան մը հետ: Ինք ջուրով կը մկրտէր, սակայն իրմէ աւելի հզօր մէկը պիտի գայ, կ'ըսէր, որ Ս. Հոգիով եւ կրակով պիտի մկրտէ (հմտ Դկ 3.15-17):

ՅԻՍՈՒՍ ԵՎ ՄԱՐԿՈՍԻՆ ԾՈՒԿԱՆԵՐԻ ՁԵՆՔՈՎ

Յիսուսի մկրտուելը մեծ հարց յարուցանեց առաջին քրիստոնեաներու մտքին մէջ: Միթէ Յիսուս մեղաւոր էր, որ կը մկրտուէր «մեղքերու թողութեան համար»: Այս հարցին մէկ արձագանգը կարելի է նկատել Մատթէոսի աւետարանին մէջ արձանագրուած Յովհաննէս Մկրտիչի առարկութիւնը թէ՛ «ես պէտք ունիմ քեզմէ մկրտուելու եւ դո՛ւն ինձի կու գաս» (Մտ 3.14):

Յիսուս որպէս թագաւոր, քահանայ եւ Մեսիական մարգարէ՝ մկրտութեան ատեն Ս. Հոգիով օծուեցաւ:

1.- Յիսուսի մկրտութեան ամենէն կարեւոր փորձառութիւնը Ս. Հոգիով օծուիլն է: Այս օծումը զինք պատրաստեց իր մեսիական գործին: Հին Կտակարանին մէջ Իսրայէլի թագաւորները կ'օծուէին եւ կ'ըլլային «Մեշիա՛հ Եահուէ՛», այսինքն՝ Տիրոջ Օծեալը:

Ա. Թգ 16.13-ի մէջ կը կարդանք. «Սամուէլ իւզի եղջիւրը առաւ եւ Դաւիթը օծեց... եւ Տիրոջ Հոգին անոր վրայ եկաւ» (տես նաեւ Դ. Թգ 9.3): Եսայի մարգարէն նոյնը կ'ըսէ գալիք թագաւորին մասին՝ թէ Աստուծոյ Հոգին անոր վրայ պիտի հանգչի (Ես 11.2, 42.1, 61.1): Յիսուս որպէս թագաւոր, քահանայ եւ Մեսիական մարգարէ՝ մկրտութեան ատեն Ս. Հոգիով օծուեցաւ:

2.- Համատեսական աւետարաններուն մէջ կը կարդանք «երկինքէն» լսուող ձայնի մը մասին: Այս ձայնը Յիսուսը կը նոյնացնէ Եսայի մարգարէին մէջ

յիշուած Աստուծոյ ծառային (էվէտ Եահուէ). «Երկինքէն ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր.- Դուն ես իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ» (Մկ 1.11, նաեւ Մտ 3.17, Դկ 3.22. հմտ Ես 42.1, Սղ 2.7): Իր մկրտութեամբ

Յիսուս ընդունեց «տառապող ծառայ»-ին պաշտօնը: Ան իր ժողովուրդին մեղքերուն համար հարուածուեցաւ, սակայն ինք մեղք չգործեց, ոչ ալ իր բերանին մէջ ստուրթիւն կար. ինք պիտի արդարացնէր շատերը՝ անոնց մեղքերը կրելով (Ես 53.8-11):

Յիսուս ճիշդ նոյն նպատակին համար ալ մեռաւ. «Տէրը իր վրայ դրաւ մեր բոլորին մեղքերը» (Ես 53.6): Այս իմաստով՝ Յիսուսի մկրտութիւնը իր մահուան նախապատկերացումն է:

Առարկութիւնը թէ՛ անմեղը թողութեան համար մկրտութեան պէտք չունի, նոյնն է նաեւ, որ կ'ըսէր թէ՛ Մեսիան պէտք չունի չարչարուելու: Ասոր ի պատասխան է, որ Յիսուս յայտնած է թէ՛ «Մարդու Որդին շատ պիտի չարչարուի եւ մերժուի երէցներէն, աւագ քահանաներէն եւ Օրէնքի ուսուցիչներէն, պիտի սպաննուի եւ երրորդ օրը յարութիւն պիտի առնէ» (Մկ 8.31):

Պօղոս առաքեալ այսպէս կը բանաձեւէ. «Մենք խաչուած Քրիստոսը կը քարոզենք, որ գայթակղութիւն է հրեաներուն եւ յիմարութիւն՝ հեթանոսներուն համար» (Ա. Կր 1.23):

Իր մկրտութեամբ Յիսուս ընդունեց «տառապող ծառայ»-ին պաշտօնը:

(Շարունակելի)

**ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ՄԱՏԹԷՆՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ**

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆ
Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.

Զ ԳԼՈՒԽ

ՈՒՍՈՒՑՈՒՄ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԱՎԱԻՆ:

«Զգո՛յ՜, Աստուծոյ հանդէպ ձեր պարտաւորութիւնները մարդոց ներկայութեան մի՛ կատարէ՛ք ցոյցի համար, որովհետեւ այդ պարագային վարձատրութիւն պիտի չստանա՛մ ձեր երկնաւոր Հօրմէն:

Երբ ողորմութիւն կ'ըզես տալ, փող ու թմբուկով մի՛ ընեն՝ մարդոց ուշադրութիւնը գրաւելու համար, ինչպէս կեդձաւորները կ'ընեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու վրայ՝ մարդոցմէ փառաւորութիւն ակնկալութեամբ: Վստա՛հ եղէ՛ք, միայն ատիկա է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, երբ դու ողորմութիւն կու տաս, ձախ ձեռք թող չգիտնա՛յ, թէ ինչ կ'ընէ աչ ձեռքդ: Այսպիսով ողորմութիւնդ գաղտնի ըրած կ'ըլլաս, եւ քու երկնաւոր Հայրդ, որ անտեսանելի է եւ կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս» (1-4):

Յիսուս զգուշացումով կը սկսի:

Նիւթը ողորմութեան մասին է, եւ գիտենք, որ ողորմութեան երկու կերպեր կայ. դրական եւ ժխտական: Աւելորդ է ըսել, թէ Յիսուս կը զգուշացնէ ողորմութեան ժխտական կերպէն:

Ան կը հրաւիրէ ի-րեն հետեւողները դրա-կան ողորմութիւն կատարելու:

Ինչպէ՞ս կ'ըլլայ ատիկա:

Դրական ողորմութիւնը ծածկապէս կը կատարուի:

Ծածկապէս կատարուած ողորմութիւնն է, որ Աստուծոյ կողմէ վարձատրութեան կ'արժանանայ, կ'ըսէ Յիսուս:

Ամէն մարդ ըստ իր սպասումին կը վարուի. ան որ մարդոցմէ գովուելի կ'ուզէ՝ ինչ բարիք որ կ'ընէ՝ ցուցական ձեւով կ'ընէ: Եւ ցուցական ձեւը կը դառնայ իր նպատակը, ու իր վարձատրութիւնն ալ մարդոց գովասանքէն անդին չանցնիր: Ան որ Աստուծոյ համար կ'ընէ եւ ոչ թէ մարդոց գովասանքին՝ անիկա Աստուծոմէ պիտի վարձատրուի:

Ի՞նչ է ողորմութեան նպատակը: Ի՞նչ

բանի կը ձգտի ողորմութիւնը:

Առաջին. ողորմութիւնը կը ձգտի կարիքաւորին օգնելու:

Կարիքաւորին օգնելը ինչն՞ է համար կարեւոր է:

Նախ եւ առաջ, կարեւոր է, որովհետեւ Աստուծոյ նմանելու ընթացքը այդպէս կ'ըլլայ:

Ե. Գլուխը աւարտեցաւ երկնաւոր Հօր պէս կատարեալ ըլլալու կոչով: Եւ ահա ցոյց կը տրուի, թէ ինչպէ՞ս կրնանք այդ նմանութիւնը մեր վրայ բերել:

Ողորմութիւն կատարելը՝ Երկնաւոր Հօր նմանելու ճամբուն մէջ ըլլալ է: Սակայն որպէսզի մէկը իսկապէս այդ ճամբուն մէջ ըլլայ, պէտք է շարժի ըստ Երկնաւոր Հօր օրինակին: Աստուած ինչպէ՞ս կ'ողորմի:

Տեսանք, Յիսուս ըսած էր. «ան իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ, եւ անձրեւ կը տեղացնէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ: Եթէ միայն ձեզ սիրողները սիրէք, Աստուծմէ ի՞նչ վարձատրութիւն կրնաք սպասել:... Եթէ միայն ձեր ազգակիցներուն հետ բարեկամութիւն ընէք, հեթանոսներէն աւելի ի՞նչ ըրած կ'ըլլաք»:

Աստուած իր արեւը կը ծագեցնէ բոլոր մարդոց վրայ անխտիր, նաեւ իր բարիքը բոլորին կը բաշխէ՝ առանց խտրութիւն դնելու: Ուստի, մարդն ալ նոյնպէս պէտք է ընէ, իր կատարելիք ողորմութիւնը միայն ծանօթներուն եւ միայն բարիներուն համար պէտք չէ սահմանափակէ, այլ բոլորին՝ այսինքն անծանօթներուն ալ, օտարներուն ալ, եւ բոլոր անոնց՝ որոնք չարիք կը հասցնեն:

Եթէ ես կը հաւատամ, որ Աստուած իմ Երկնաւոր Հայրս է, եւ բոլոր մարդիկը՝ իմ եղբայրներս են, այդ պարագային բարի մարդու եւ չար մարդու, ծանօթի կամ անծանօթի կամ օտարի հարց չի մնար:

Արդ, Աստուծոյ օրինակը անպայմանաւոր բարեգործութիւն կը պահանջէ: Եւ անպայմանաւոր բարեգործութիւնը այն մէկն է, որ ո՛չ վարձատրութեան եւ ո՛չ ալ շահի ակնկալութիւն ունի:

Քանի այդպէս է, ինչն՞ է համար Յիսուս կ'ըսէ, թէ ծածկաբար կատարուած

Ծածկապէս կատարուած ողորմութիւնն է, որ Աստուծոյ կողմէ վարձատրութեան կ'արժանանայ...

ողորմութեան դիմաց՝ Աստուած պիտի վարձատրէ: Արդեօ՞ք ըսել կ'ուզէ, թէ երբ ծածուկ կերպով ողորմութիւնը կատարենք՝ իրաւունքը ունինք Աստուծմէ ողորմութիւն ակնկալելու:

Յիսուսի տրամաբանութիւնը շուկայական չէ: Երբ Աստուած պիտի վարձատրէ կ'ըսէ՝ խոստում մըն է, որ կու տայ ան: Խոստումը Աստուծոյ յաւելեալ գնահատանքն է բարի գործի մը: Եւ այնպէս ինչպէս աշխատասէր աշակերտի մը համար բարձր նիշը յաւելեալ խայծ մը կ'ըլլայ նոյն կամ առաւել թափով մը շարունակելու իր ընթացքը, նոյնպէս Աստուծոյ խոստումը յաւելեալ խայծ կ'ըլլայ բարի գործ կատարողի մը՝ նոյն կամ առաւել թափով մը շարունակելու իր ծառայութիւնը:

Ի՞նչ վարձատրութիւն կը խոստանայ Աստուած բարի գործին իբր գնահատանք:

Մեր փրկութիւնը:
Որպէսզի մարդկային մտածողութեամբ չքալենք մեր ճամբան, Յիսուս Ս. Հոգին կը խոստանայ: Ս. Հոգին մեծագոյն պարգեւն է: Անիկա կ'առաջնորդէ եւ մեր տրամադրութիւնները ճիշդ ճանապարհին մէջ կը դնէ: Ս. Հոգիին շնորհիւ է, որ մենք արժանի կ'ըլլանք փրկութեան ճանապարհին մէջ քալելու եւ հասնելու յաւիտենական կեանքին:

Հետեւաբար, այն մարդը որ յայտնի կ'ուզէ ընել իր գործերը, մանաւանդ բարեգործութիւնները, կը նշանակէ թէ յաւիտենականին կամ Աստուծոյ համար չէ որ կ'աշխատի, այլ իր անունին: Եւ ան որ մարդոց կողմէ փառաւորութիւ կ'ուզէ՝ իր գտնելիք հատուցումը այնքան պիտի ըլլայ: Կ'ուզես որ մարդի՞կ քեզ փառաւորեն. ահաւասիկ քեզ փառաւորեցին եւ վերջացաւ, ու ստանալիքդ ստացար:

Իսկ այն մարդը որ իր վարձատրութիւնը

Աստուծմէ կը սպասէ, կը գործէ այնպէս՝ որ իր ըրածները ուրիշներուն տեսանելի չըլլան, այլ միայն Աստուծոյ տեսանելի ըլլան: Անիկա չի ձգտիր, որ իր սեփական անունը փառաւորութի, այլ կը գործէ Աստուծոյ անուան փառաւորութիւն համար:

«...երբ դուն ողորմութիւն կու տաս, ձախ ձեռքդ թող չգիտնա՛յ թէ ինչ կ'ընէ աջ ձեռքդ»: Ի՞նչ ըսել կ'ուզէ Յիսուս:

Թէ ամենամտերիմն իսկ, ամենամօտիկ հարազատն անգամ պէտք չէ գիտնայ կատարուած ողորմութեան մասին: Այլ եւ աւելի խոր նշանակութիւն մըն ալ ունի այս խօսքը: Կը նշանակէ նաեւ՝ թէ ողորմութիւն կատարողը ինք եւս պէտք է մոռնայ իր ըրած բարիքը: Բայց մարդ կրնա՞յ իր յիշողութիւնը ջնջել: Ոչ: Սակայն յիշողութիւնը ջնջելու մասին չէ ըսուածը: Սպասուածը այն է, թէ կատարուած բարիքը ինքնահիացման առիթի պէտք չէ վերածուի, եւ անձը պէտք չէ սկսի իր ըրածներուն կարեւորութիւնը ընծայել, այլապէս փառամոլութիւնը կու գայ եւ սեփական անձին մէջ տեղ կը գրաւէ ու բարեգործութիւնը իր նպատակէն շեղած կ'ըլլայ:

Յիսուս կը պատուիրէ, որ ողորմութիւնը գաղտնի կատարես, եւ վստահ ըլլաս, որ երկնաւոր Հայրը ինք կը տեսնէ ըրածդ ու կը վարձատրէ քեզ իր փրկութեան ճանապարհին մէջ քեզ պահելով, եւ քեզ ընդունելով: Այս է վարձատրութիւնը:

այն մարդը որ յայտնի կ'ուզէ ընել իր գործերը, մանաւանդ բարեգործութիւնները, կը նշանակէ թէ յաւիտենականին կամ Աստուծոյ համար չէ որ կ'աշխատի, այլ իր անունին:

ողորմութիւն կատարողը ինք եւս պէտք է մոռնայ իր ըրած բարիքը:

Ս. Հոգին մեծագոյն պարգեւն է: Անիկա կ'առաջնորդէ եւ մեր տրամադրութիւնները ճիշդ ճանապարհին մէջ կը դնէ:

(Շարունակելի 21)

**ՅԱԶՈՐԻ ԸՎԹԹՈՒՎ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅ**

Երեքշաբթի, 13 Յունուար 2009

Տօն Անուանակոչութեան
19.00 > Երիտասարդական սերտողութիւն՝
Աղօթքի փորձարկում

Յինգշաբթի, 15 Յունուար 2009

Տօն Ս. Յովհաննու Կարապետի
11.00 > Աղօթածողով՝
Ս. ՅԱԿՈԲ քոյրերու ժողով

Կիրակի, 18 Յունուար 2009

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն
11.00 > Ս. Եւ անմահ Պատարագ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՅԱՏՈՒԿ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կը վերսկսին

ամսուայ սիւրճ՝

**PRAYER EXPERIMENTS
ԱՂՕԹՔԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ**

ԵՐԵՔՇԱԲԹԻ 13 ՅՈՒՆՈՒԱՐ 2009
ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄՆ 7.00
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՍԵՆԵԱԿ

Յաւելեալ տեղեկութեան համար հեռաձայնել
դիւանատուն՝ 514 331 5445 x202

**ԱրՏԱՅՈՒՄԻՆԵՅԷ
eglise58@sourphagop.com**

**ՆԱԽՈՐԻ ԹԻՒԵՐՈՆ ԿՐԱՔ ԳՏՆԵԼ
www.sourphagop.org/lradou
ԿԱՅԷԶԻՆ ԿՐԱՎ**

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհնէք փափաքող
ընտանիքները,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 331 5445 x203
թիւին,
կամ՝ 514 909 5203 թիւին:

ՀԻՄՆԱԴԱՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանին.

514 331 5445 x203 կամ 514 909 5203 թիւին:

Սոյն թերթիւն ե-նամակով ստանալու
չաւար Ձեր ե-ՀԱՍՅԷՆ ՈՒՊՈՒԿԵՅԷՔ
eglise58@sourphagop.com-ին

**ՀՈԳԵՇԱՆԳԱՏԵԱՆ ՁԵՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՆ ՆԱԽՕՐՕՔ
ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՅԻՈՅԱ ԳՐԱՏԵՆԵԱԿ**

**ՀԱՄԱՅՆԵՐԱ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՇԱՄԱՐ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԸ**

ԲՁԺ Է

**ԵՐԿՈՒՇԱԲԹԻՆ ՈՒՐԲԱԹ
ԺԱՄՆ 8.30-ԷՆ 16.00**

**ՀԱՃԵՅԷՔ ԿԱՊՈՒԻՂ ԲԱՐՏՈՒԿԱՐԻՆ՝
514 331 5445 x202**

**ԿԱՄ ՀՈՎԻՐՆ՝
514 331 5445 x203**

**ԿԱՄ ԳՐԵԼ ՇԵՏԵԵԱԿ Ե-ՀԱՍՅԷՐՆ՝
eglise58@sourphagop.com**